

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ
ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

27 Շուգրթ 2019թ.

N 32 Ա

ք. Ստեփանակերտ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 15-ի N 169-Ա որոշումը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Արցախի Հանրապետության տարածքի լքված, կոնսերվացված հանքավայրերի և ընդերքօգտագործման թափոնների հայտնաբերմանն ուղղված հետախուզական աշխատանքների կատարման, գույքագրման, հողի նմուշառման նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով.

- | | |
|---------------------|---|
| 1) Վիտալի Ավանեսյան | Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի բնական ռեսուրսների, թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման գործակալության ընդերքի տրամադրման և օգտակար հանածոների պաշարների բաժնի պետ՝ խմբի ղեկավար |
| 4) Տիգրան Ասրյան | նախարարության աշխատակազմի բնապահպանության և ընդերքի պետական տեսչության ընդերքի երկրաբանական և մարկշեյդերական վերահսկողության բաժնի պետ |
| 2) Աշխեն Աթայան | նախարարության աշխատակազմի բնական ռեսուրսների, թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման գործակալության ընդերքի տրամադրման և օգտակար հանածոների պաշարների բաժնի գլխավոր մասնագետ |

- | | |
|-----------------------|--|
| 2) Վլադիմիր Գրիգորյան | Նախարարության աշխատակազմի բնական ռեսուրսների, թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման գործակալության ընդերքի տրամադրման և օգտակար հանածոների պաշարների բաժնի գլխավոր մասնագետ |
| 5) Անի Հայրապետյան | Նախարարության աշխատակազմի բնապահպանության և ընդերքի պետական տեսչության ընդերքի երկրաբանական և մարկշեյդերական վերահսկողության բաժնի առաջատար մասնագետ |
| 6) Գոհար Մանասյան | Նախարարության աշխատակազմի բնապահպանության և ընդերքի պետական տեսչության ընդերքի երկրաբանական և մարկշեյդերական վերահսկողության բաժնի առաջին կարգի մասնագետ |
| 7) Ֆելիքս Դալլաքյան | Նախարարության աշխատակազմի պայմանագրային աշխատող |
| 8) Նարեկ Գյուրջյան | Մարտակերտի տարածքային բնապահպանական ավագ պետական տեսուչ |
| 9) Մամիկոն Ներսեսյան | Քաշաթաղի տարածքային բնապահպանական ավագ պետական տեսուչ |
| 10) Ժիրայր Իշխանյան | Քաշաթաղի տարածքային բնապահպանական ավագ պետական տեսուչ |
| 11) Վարուժան Նասիրյան | Շուշիի տարածքային բնապահպանական ավագ պետական տեսուչ |
| 12) Արտուր Գաբրիելյան | Ասկերանի տարածքային բնապահպանական ավագ պետական տեսուչ |
| 13) Արամ Նարինյան | Մարտունու տարածքային բնապահպանական ավագ պետական տեսուչ |
| 14) Գագիկ Օհանյան | Հադրութի տարածքային բնապահպանական ավագ պետական տեսուչ |

2. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ աշխատանքներն իրականացնել սույն թվականի մարտի 27-ից դեկտեմբերի 15-ն ընկած ժամանակաշրջանում, կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը ներկայացնել նախարարի տեղակալ Ալեքսանդր Գասպարյանին մինչև սույն թվականի դեկտեմբերի 20-ը:

3. Նախարարի տեղակալ Ալեքսանդր Գասպարյանին՝ ծրագրի արդյունքների վերաբերյալ ամփոփ հաշվետվությունը ներկայացնել նախարարին մինչև սույն թվականի դեկտեմբերի 25-ը:

4. «Արցախի Հանրապետության տարածքի լքված, կոնսերվացված հանքավայրերի և արդյունաբերական թափոնների մոնիթորինգի 2019 թվականի

ծրագիր»-ի անմիջական վերահսկողությունը վերապահել Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարի տեղակալ՝ Ալեքսանդր Գասպարյանին:

5. Նախարարության աշխատակազմի քարտուղարության պետին՝ հրամանը հասցնել նախարարի տեղակալներին, աշխատակազմի ղեկավարին, բնապահպանական և ընդերքի պետական տեսչության պետին, բնական ռեսուրսների, թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման գործակալության պետին, աշխատանքային խմբի անդամներին՝ իրենց վերաբերող մասով:



Ֆ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ